ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «03» 03 2017թ. № 173-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N 587-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պարգևների ձևերը, դրանց ներկայացման և շնորհման կարգը սահմանելու մասին» N 587-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1. հրամանի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պարգևների ձևերը սահմանելու ու պարգևների ներկայացման և շնորհման կարգը հաստատելու մասին»:

2. հրամանի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Սահմանել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պարգևների ձևերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. հրամանը լրացնել նոր 1.1-ին կետով՝

«1.1 Հաստատել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պարգևների ներկայացման և շնորհման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:»

3. հրամանի NN 1 և 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2017 թվականի մարտի - ի -Ա հրամանի
«Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013 թվականի հուլիսի 11- ի 587 -Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

_____

կապակցությամբ

Տրվում է

_____

_____ *համար* _____

Նախարար՝ _____

«___» _____ *20__ թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏՎՈԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎՈԳԻՐ

_____ *կապակցությամբ*

Տրվում է

_____

_____

_____ *համար*

«___» _____ 20__ թ. *Նախարար՝*

.....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ

Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2017 թվականի մարտի - ի -Ա հրամանի
«Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013 թվականի հուլիսի 11- ի 587 -Ա հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և նախարարության համակարգի աշխատողների, ինչպես նաև համակարգի զարգացման գործում նշանակալի ավանդ ունեցող անձանց, կազմակերպություններին նախարարության պարգևների ներկայացման և շնորհման ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը պարգևատրում է շնորհակալագրով, պատվոգրով, փոքր հուշամեդալով և մեծ հուշամեդալով՝ համաձայն N 1 հավելվածով սահմանված ձևերի:

3. Նախարարության պարգևներով կարող են պարգևատրվել նախարարության աշխատողները, տնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող անձինք և կազմակերպությունները, ինչպես նաև տնտեսության ոլորտում միջազգային համագործակցության զարգացման ընթացքին նպաստող անձինք և կազմակերպությունները:

4. Նախարարության պարգևներով պարգևատրվում են նախարարության համակարգման ոլորտներում ներդրած նշանակալի ավանդի և երկարամյա բարեխիղճ ու անբասիր աշխատանքի համար:

5. Նախարարության պարգևները տրվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի նախաձեռնությամբ կամ Հայաստանի Հանրապետության տնտեսական

զարգացման և ներդրումների նախարարին ներկայացված միջնորդության հիման վրա:

6. Միջնորդությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի անունով:

7. Միջնորդություն կարող են ներկայացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև նախարարության աշխատակազմի ղեկավարը:

8. Նախարարության պարգևին ներկայացվող անձի վերաբերյալ կարող են ներկայացվել մեկից ավելի միջնորդություններ:

9. Միջնորդությունը պետք է պարունակի պարգևատրման ներկայացվող անձի (անձանց) և կազմակերպության (ների) տվյալները, այդ թվում՝ կենսագրական տվյալները, ինչպես նաև պարգևատրման ներկայացման հիմնավորումները՝ ներառելով ոլորտում մատուցած ծառայությունները և ունեցած վաստակը:

10. Ստացված միջնորդությունը եռօրյա ժամկետում ուսումնասիրվում են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների կողմից:

11. Ուսումնասիրված միջնորդության վերաբերյալ տրվում է եզրակացություն:

12. Եզրակացությունը կցվում է համապատասխան միջնորդությանը և ներկայացվում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին:

13. Սույն կարգի 2-րդ կետում նշված պարգևների ձևի ընտրությունը և պարգևատրման մերժումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը:

14. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի կողմից միջնորդությունը բավարարվելու դեպքում նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչությունը եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և

ներդրումների նախարարի ստորագրմանն է ներկայացնում համապատասխան հրամանի նախագիծը:

15. Նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչությունը սույն կարգին համապատասխան կարգով ձեռնարկում է միջոցառումներ նախարարության պարգևների պատրաստման և ձեռքբերման ուղղությամբ:

16. Շնորհակալագիրը և պատվոգիրը պետք է պատրաստվի դիզայներական ոսկեփայլ Ա4 չափի 300գրամանոց թղթի վրա, լազերային տպագրությամբ:

17. Փոքր հուշամեդալի նյութը պետք է լինի արույր-ոսկեջուր, մետաղի քաշը՝ 39.5 գրամ, տրամագիծը՝ Φ=38մմ: Հուշամեդալը պետք է լինի կապսուլավորված և համապատասխան տուփով:

18. Մեծ հուշամեդալի նյութը պետք է լինի արծաթ-ոսկեջուր, հարգը՝ 925, մետաղի քաշը՝ 46.7 գրամ, տրամագիծը՝ Φ=46մմ: Հուշամեդալը պետք է լինի կապսուլավորված և համապատասխան տուփով:

19. Անձնակազմի կառավարման վարչության կողմից վարվում են մատյաններ, որոնցում նշվում են շնորհակալագիր, պատվոգիր, փոքր և մեծ հուշամեդալներ ստացած անձանց անունը, ազգանունը, հայրանունը ու զբաղեցրած պաշտոնը, իսկ կազմակերպությունների դեպքում՝ ճիշտ անվանումը, խրախուսման պատճառը, իրավական ակտի համարը և ամսաթիվը:

20. Մատյանները վարվում են փաստացի տարվա համար:

21. Շնորհակալագրով, պատվոգրով, փոքր և մեծ հուշամեդալներով պարգևատրման համար հաջորդականության պարտադիր պահանջ չկա:

22. Նախարարության պարգևները հանդիսավոր պայմաններում հանձնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձը:

23. Նախարարության աշխատողներին պարգևներ հանձնելու դեպքում համապատասխան հրամանի կրկնօրինակը ներառվում է համապատասխան աշխատողի անձնական գործում: